# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## ՈՐՈՇՈՒՄ

<<-17->> Սեպտեմբերի 2020թ.   N ՄՌ/392-2020

ք. Արմավիր

### ԽԱՉԻԿ ԻՆՋՅԱՆԻՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽՉՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 2 հավելվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 01 //08548-2020 գրությունը.

ո ր ո շ ու մ   ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Խաչիկ Ինջյանին 2020 թվականի սեպտեմբերի 19-ին գործուղել Արարատի մարզի Մխչյան համայնք՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի ճանապարհային փոխադրումն ապահովելու նպատակով:
2. Գործուղումն իրականացնել TOYOTA LC 150 մակնիշի 055 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենայով:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Վ. Մկրտչյան)՝ իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնին (պետ՝ Ա. Համբարձումյան)՝ ապահովել համապատասխան վառելանյութի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝   Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 17.09.2020 16:37:05 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230